

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

__05__08__2015թ.
գ. Ակունք

2015թվականի օգոստոսի 5-ին տեղի է ունեցել Ակունքի համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ

1. Ավագյան Նարինե
2. Մկրտչյան Գոռ
3. Մելքումյան Միհրան
4. Սամսոնյան Վարդան
5. Տիգրանյան Էդիկ
6. Ավետիսյան Քաջիկ

Գյուղապետարանի աշխատակազմից

1. Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Աբրահամյան
2. Աշխատակազմի քարտուղար Մ. Սարիբեկյան
3. Առաջատար մասնագետներ Մ. Հովհաննիսյան
Ա. Ղազարյան
Օ. Աղաբեկյան

Համայնքի բնակիչներ 78 մարդ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավար կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ հարցեր

Լսեցին՝ համայնքի ղեկավար Հ. Ռուբենյանի հաշվետվությունը 2015 թ. կատարված աշխատանքների մասին.

1. Համայնքի բյուջեի միջոցներով իրականացվել է գրադարանի սենյակի վերանորոգման աշխատանքներ:
2. Կատարվել է աղբավայրի տեղափոխում համայնքի բյուջեի միջոցներով:
3. Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված միջոցներով կատարվել է խմելու ջրագծի և պոմպակայանի կապիտալ վերանորոգում:
4. Ստեղծվել է <Ակունք համայնքի արոտագործողների միավորում> սպառողական կոոպերատիվը <Գյուղատնտեսական ծրագրերի գրասենյակ>ՊՀ և համայնքի կողմից համաֆինանսավորման միջոցներով:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

Ելույթ ունեցան ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ և հավահության արժանացրին կատարված աշխատանքները:

2 Ընթացիկ հարցեր

- Մանկապարտեզի շենքի մասին
- <Համայնքի արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ> ծրագրի իրականացում

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1. Համայնքի բնակիչ Գ.Խաչիկյան- համայնքի փողոցների ասֆալտները վերանորոգման կարիք ունենա:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավար Հունան Ռուբենյանի հաշվետվությունը 2015թ. կատարված աշխատանքների մասին:

X



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`

Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ